ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տոներների և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/42» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/42-2» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի հունիսի 12-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրի 6-րդ չափաբաժնով նախատեսված 48 կիլոգրամ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար տոներներից 32 կիլոգրամ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար տոներների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 6-րդ չափաբաժնով նախատեսված 32 կիլոգրամ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար տոներների մասով Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 14.11.2022թ.
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/42-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» հունիսի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 14.11.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/42-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 6-րդ չափաբաժնով նախատեսված 48 կիլոգրամ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար տոներներից 32 կիլոգրամ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար տոներների մասով **384 000 (երեք հարյուր ութսունչորս հազար)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 6-րդ չափաբաժնով նախատեսված 32 կիլոգրամ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար տոներների մասով Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00861057
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 1660000446270100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյան	

Հավելված N 1
« 12 » հունիսի 2023թ. կնքված N 3 համաձայնագրի

(Հավելված N 3
« 14 » « 11 » 2022թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/42-2» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	30121470/6	6. Տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար	384 000	384 000	384 000	384 000	384 000	384 000	384 000	**384 000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

ՎԱՃԱՌՈՂ
ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ՝ 00861057
Հ/Հ՝ 1660000446270100
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Կ. Սուքիասյան